

## ***Հովհ. Թումանյանի <<Սասունցի Դավիթ>> պոեմը (1 ժամ)***

***Դասի թեման՝***

***Դասի նպատակը՝***

**ա)** կընկալի և կվերարտադրի հատվածի բովանդակությունը:

**բ)** կվերարտադրի գործողությունների զարգացման ընթացքը՝ դիպաշարը:

**գ)** կներկայացնի և կբնութագրի հերոսներին՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները:

**դ)** կհամեմատի և զուգահեռներ կանցկացնի ժողովրդական և հեղինակային տարբերակների միջև՝ ըստ տրված հատվածների:

**ե)** կցուցաբերի ստեղծագործական մոտեցում դյուցազներգության նկատմամբ:

**զ)** կընդհանրացնի ժողովրդական հավաքական մտածողությունը:

**է)** կզարգացնի խոսք կառուցելու, սեփական խոսքը, տեսակետը հիմնավորելու ստեղծագործական կարողությունները:

**ը)** դատողություններ կանի և սեփական վերաբերմունքը կարտահայտի հասարակության տարբեր խավերը ներկայացնող (**Բռնակալ Մելիք և արաբ ծերունի**) մարդկանց վիճակի, ճակատագրի և փոխհարաբերությունների վերաբերյալ:

**թ)** կզարգացնի քննարկումներին մասնակցելու և լսարանի առջև ելույթ ունենալու կարողությունները:

**ժ)** կարտահայտի իր վերաբերմունքն այնպիսի արժեքների նկատմամբ, ինչպիսիք են արժանապատվությունը, ազգային անվտանգության ապահովման գիտակցումը, մարդասիրությունը:

***Դասի ընթացքը***

***Խթանման փուլ(7 – 10 րոպե)***

Անդրադարձ է կատարվում հերոսներին բնութագրող աղյուսակին: Նախորդ դասին(դասագրքում զետեղված 5-րդ հատվածը – էջ 34 - 38)բնութագրվել են հերոսները՝ Դավիթը և Մսրա Մելիքը, ապա հանձնարարվել է շարունակել տանը: Ստուգվում է տնային հանձնարարությունը:

ՂԱՎԻԹ	ՄՍՐԱ ՄԵԼԻՔ
Հայրենասեր ու մարդասեր, ազատատենչ ու ըմբոստ, դյուրահավատ, ազնիվ ու շիտակ, արդարադատ, վճռական, դյուցազնական արժանապատվությամբ, խորհուրդ լսող	Խորամանկ ու նենգ բռնակալ, մենամարտի օրենքները խախտող, մեծամիտ ու պարծենկոտ, դյուցազնական պատվասիրություն չունեցող

Ապա աշակերտները պատմում են դասագրքի 5-րդ հատվածը՝ շարունակելով ու բնութագրելով գլխավոր հերոսներին՝ Դավթին և Մսրա Մելիքին: Աշակերտները վերնագրում են հատվածը՝ «Դավթի մենամարտը», և ներկայացնում ըստ հետևյալ պլանի

1. Մենամարտի կարգը
2. Մելիքի զարկերը
3. Խնդրանքը
4. Դավթի զարկերը
5. Մահ թշնամուն
6. Դավթի խորհուրդը Մսրա գործին

***Իմաստի ընկալում (20 – 25 րոպե)***

Քանի որ դասագրքում զետեղված 7-րդ հատվածը Հովի. Թումանյանի վերամշակած տարբերակն է, ապա աշակերտներին տրվում է հանձնարարություն դասագրքով աշխատելու համար: Աշակերտներն աշխատում են զույգերով: Ուսուցիչը հատվածը նախապես բաժանում է 3 պայմանական մասի: Այդ նպատակով հանձնարարվում է.

1. զույգերով ներկայացնել Մասունցի Դավթի և Մսրա Մելիքի կովի դրվագները՝ վերլուծելով և գնահատելով նրանց վարքագիծը:
2. կարդացած դրվագը համեմատել ժողովրդական տարբերակի (դյուցազներգության) հետ:

էպոս	պոեմ

Աշակերտները համեմատում են մոր և քրոջ խնդրանքի դրվագները և հանգում այն եզրակացության, որ Հովի. Թումանյանը փոխել է դրանք: Փոխել է նաև մենամարտի վայրերի անունները:

3. Տեսական մասը (էջ 43) ընկալելու և արդյունավետ աշխատելու համար կիրառվում է <<Փոխգործուն նշանների համակարգ>> (ՓՆՀ) մեթոդը, որով վերահսկվում է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը:

Ընթերցելով նյութը՝ աշակերտները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ –ի նշանները(V, +, -, ?, !):

Աշակերտները հայտնաբերում են նորություն. Թումանյանը գրել է պոեմ երեխաների համար և պոեմում չի ընդգրկել երեխայի հոգուն անհարիր հատվածները:

### **Կշռադաստում ( 10 րոպե)**

Տրվում են ընդհատական հարցեր, որոնք սովորողին հնարավորություն են ընձեռում գնահատելու և ամբողջական ընկալելու ընթերցած հատվածը.

1. Ի՞նչ հատվածներ է դուրս թողել Թումանյանը:
2. Ի՞նչ ընդհանրություն կա Թումանյանի պոեմի և համահավաք բնագրի միջև:
3. Ինչպե՞ս կգնահատեք Դավթի՝ զարկերը մորը և քրոջը զիջելու դրվագները:
4. Ո՞ր դրվագը կցանկանայիք փոխել. հիմնավորե՛ք՝ ինչու:

Արժևորման համար կիրառվում է <<Հնգյակը>>: Աշակերտները *Դավիթ* և *Մելիք* բառերով առանձին – առանձին կազմում են <<Հնգյակ>> .

#### **ԴԱՎԻԹ**

հայրենասեր քաջ  
չվախեցող պաշտպանող հարգող  
հայրենիքի անձնագրի նվիրյալ  
**ՀԵՐՈՍ**

#### **ՄԵԼԻՔ**

նենգ խարդախ  
խաբող չհարգող նվաճող  
իր և ուրիշ ժողովուրդների իրավունքները ոտնահարող  
**ԲՈՆԱԿԱԼ**

Դասի վերջում կիրառվում է <<**Հեղինակի աթոռ**>> - ը.

1. Քանի՞ տարբերակ կար, որից օգտվեցիք:
2. Ինչո՞ւ դուրս թողեցիք մի քանի դրվագներ:
3. Ինչո՞ւ չմշակեցիք **IV** ճյուղը:
4. Ինչո՞ւ եք փոխել Մելիքի մոր և քրոջ խնդրանքի դրվագը:

Դասի վերջում վերջնական ամփոփման նպատակով տրվում է **փոքրիկ շարադրանք**՝ <<Ի՞նչ կփոխեի և ի՞նչ կավելացնեի Դավթի կերպարում>>: